ՌԱԶՄԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊԱՀԱԿ

«Օպերացիաների գլխավոր օբյեկտը պետք է լինի ոչ թե տարածքը, այլ հակառակորդի բանակը»
Հելմուտ ֆոն Մոլտկե

Բանակի գլխավոր զորակայանի կազմակերպումը հույժ կարևորություն ունեցող խնդիր է, որին, սակայն, մշտապես պատշաճ նշանակություն չի տրվում: Կան զորավարներ, որ խորհրդի կարիք չեն զգում, ամեն բան կշռադատում և վճռում են ինքնուրույն. նրանց շրջապատը սոսկ կատարում է նրանց ծրագրածը: Սակայն դրանք առաջին մեծության աստղեր են, որոնք ի հայտ են գալիս ոչ բոլոր հարյուրամյակներում: Պետք է լինել Ֆրիդրիխ Մեծ, ոչ մեկի հետ չխորհրդակցելով՝ մշտապես գործել ինքնուրույն: Զորավարը մեծամասամբ առանց խորհուրդների անկարող է կարգավորել իր գործերը: Այդ խորհուրդները կարող են արդյունք լինել մի շարք անձանց քննարկման, որոնք իրենց կրթության և փորձառության ընձեռած հնարավորությունների չափով ունակ են ճշգրիտ գնահատելու իրավիճակը:

Բայց արդեն այդ անձանց շրջանում պետք է բյուրեղանա միմյան մեկ կարծիք: Գլխավոր հրամանատարին պետք է առաջարկվի միայն այդ կարծիքը և միայն այդ բանի համար լիազորված անձի կողմից: Զորավարն նրան կարող է ընտրել՝ ղեկավարվելով ոչ թե ավագության աստիճանակարգով, այլ իր անձնական վստահությամբ:

Երբեմն խորհուրդը կարող է լավագույնը չլինել: Այսուհանդերձ, գործելով համառորեն ու հետևողականորեն միևնույն ուղղությամբ, կարելի է հասնել բարենպաստ արդյունքի: Խորհրդատուի հետ համեմատած՝ գլխավոր հրամանատարի խնդիրը շատ ավելի ծանր է: Նա է պատասխանատվություն կրում կատարման համար:

Իսկ եթե զորավարին շրջապատում են անձինք, ովքեր անկախ են միմյանցից, ապա որքան նրանց դիրքը, կոչումը և մտավոր կարողությունները բարձր են, այնքան ավելի վատ. զորավարը կլսի մեկի խորհուրդը, ապա մյուսինը, հետո երրորդի հիմնավորված առարկությունները և այլն: Տվյալ պարագայում կարելի է վստահորեն գրազ գալ, որ զորավարը, հետևելով այդ բոլոր՝ առանձին-առանձին լիովին պատճառաբանված խորհուրդներին, տանուլ կտա ռազմարշավը:

Ռազմական խորհրդում ազդու և անհերքելի փաստարկներով հիմնավորվում է, որ մի կարծիքը հերքվում է մյուսով: Դրական կարծիքը առաջացնում է առավել անվիճելի մտավախություններ, ժխտումը հաղթանակում է և ամեն բան հանգում է չեզոք՝ ոչինչ չանելուն: Այսպիսով, բոլոր գլխավոր զորակայններում կան անձինք, որոնց հատուկ է մեծ խորաթափանցությամբ մատնացույց անել այն բոլոր խոչնդոտները, որոնք կարող են հանդիպել առաջարկվող գործողությունների կատարման

ընթացքում: Իրավիճակի առաջին իսկ բարդացման դեպքում այդ անձինք համոզիչ ապացուցում են, որ այդ ամենը նրանք վաղուց կանխատեսել էին: Նրանք մշտապես իրավացի են, քանզի իրենք երբեք որևէ դրական առաջարկ չեն ներկայացնում և ոչինչ չեն կատարում, հետևաբար հաջողությունը նրանց ակարող է հերքել: Այս՝ ամեն բան ժխտող անձինք կործանարար են զորավարի համար:

…Սակայն ամենադժբախտ զորավարը նա է, ով իր վրա վերահսկողություն ունի, որին նա պարտավոր է հաշվետվություն տալ ամեն օր, ամեն ժամ իր մտադրությունների, ծրագրերի վերաբերյալ: Այդ վերահսկողությունը երկրի բարձրագույն իշխանության ներկայացուցիչն է զորակայանում: Նման համակարգում անտեսվում է ինքնուրույնությունը, արագ վճիռը, համարձակ քայլը, որոնց բացակայության դեպքում հնարավոր չէ պատերազմ վարել: Սոսկ մեկ անձը ինքնուրույն կարող է համարձակ վճիռ կայացնել:

Հեռվից անգամ խելամիտ հրամաններ տալը խիստ վտանգավոր է: Եթե բանակում ռազմական գերագույն իշխանություն չկա, ապա զորավարը պետք է ունենա գործելու լիակատար ազատություն: **Չի կարելի պատերազմ վարել գրասեղանի առջև նստած:** Ակնթարթային որոշումներ կարելի է ընդունել միմիայն տեղում՝ վերլուծելով ստեղծված իրավիճակը: Ուստի, եթե պատերազմը արդեն հայտարարված է, գլխավոր հրամանատարին պետք է տրվի լիակատար ազատություն՝ գործելու ըստ իր հայեցողության:

…*Գլխավոր հրամանատարի ընտրությունը* հույժ կարևոր խնդիր է, որը, ցավոք, հաճախ լուծվում է կամայականորեն: Նա ծանր պատասխանատվություն է կրում Աստծո և իր խղճի առջև, սրա համեմատությամբ հետագա դատաստանի հանդեպ պատասխանատվությունը խամրում է: Իր գործողություններում, որոնց հաջողությունը, ի դեպ, երբեք ապահովագրված չէ, բանակի հրամանատարը ևս, ինչպես պետական գործիչը, որ ղեկավարում է քաղաքականությունը, չպետք է վախենա դատական պատասխանատվությունից: Նա Աստծո և իր խղճի առջև կրում է միանգամայն այլ պատասխանատվություն՝ բազմաթիվ մարդկանց կյանքի և պետության բարօրության համար: Նա կորցնում է ավելին, քան ազատությունը և ունեցվածքն են:

Այդ պատճառով ամենուրեք իրական գլխավոր հրամանատարը ինքնակալն է, որը, տեսականորեն լինելով անպատասխանատու, իրականում կրում է ամենածանր պատասխանատվությունը, քանզի վտանգում է իր թագն ու գայիսոնը:

… Զորքերի այն հսկայական զանգվածը, որ հարկ է լինում հավաքագրել պատերազմի համար, կարող է գործել սոսկ տարաբաժանված մի քանի բանակների: Յուրաքանչյուր բանակի կազմը համալրող զորքերի քանակը պետք է սահմանվի կապված նրան առաջադրված խնդրի բնույթից և առանձին կորպուսների տեղաբաշխումից այնպես, որ նրանք հնարավորություն ունենան կարճ ժամանակում լիովին պատրաստ լինելու:

Անգամ բանակի սկզբնական ռազմավարական տեղաբաշխումը, միջոցների կենտրոնացումը պատերազմ վարելու համար, հնարավոր չէ անել՝ նախապես չհստակեցնելով գործողությունների ծրագիրը: Նախ հարկ է խորհել՝ ինչը պաշտպանել և իչի վրա հարձակվել՝ հաշվի առնելով աշխարհագրական, պետական և քաղաքական բազմակողմանի նկատառումները: Ամրոցները, տեղանքի շահավետ մասերը, երկաթուղային հաղորդակցությունը, մեր տրամադրության տակ եղած միջոցները. այս ամենը հաստատուն մեծություններ են, մինչդեռ այդ քիչ թե շատ հավանական

հաշվարկներում ներմուծվում է քաղաքականությունը՝ իբրև փոփոխական գործոն, որն անչափ կարևոր է վերջնական արդյունքի համար, ուստի և անտեսել այն հնարավոր չէ:

Ուժերի կենտրոնացման համար պետք է հիմք ծառայի որոշակի ուղղությամբ գործելու որոշումը, և գործելու այդ կամքը նախապատրաստության շնորհիվ հարկ է հասցնել այն աստիճանի, որ հակառակորդը, իր մտահղացումներով ու ծրագրերով հանդերձ, անվերապահորեն ենթարկվի այդ նախաձեռնությանը: Հարձակումը պետք է հաջորդի ուժերի կենտրոնացմանը, ինչպես կայծակը ամպրոպին՝ իբրև կատարելապես անհրաժեշտ, բնական, տրամաբանական եզրահանգում: Այդ հարձակումը պետք է նախապատրաստվի և մշակվի ամենայն մանրամասնությամբ:

Եթե իբրև հիմք ընդունված նկատառումները չհաստատվեն, ապա ամբողջ աշխատանքը զուր կանցնի: Անգամ մեկ սխալը, որ արվում է նախնական կենտրոնացման ժամանակ, դժվար թե հնարավոր լինի շտկել ռազմարշավի ընթացքում: Այնուամենայնիվ, այդ ամենը կարելի է կշռադատել պատերազմից առաջ և նրանց վրա հիմնված կարգադրությունները, ճիշտ կազմակերպված զորահավաքի և զորքերի տեղափոխման դեպքում, պետք է անվերապահորեն հանգեցնեն ցանկալի արդյունքին:

… Իրավիճակն այլ է, երբ պատերազմի ընթացքում գործողությունների ծրագրի իականացման ժամանակ կիրառվում են արդեն նախապատրաստված միջոցները: Այստեղ մեր *կամքը* շատ շուտով բախվում է հակառակորդի անկախ կամքին, ուստի և գործողությունները կախված են ոչ միայն սեփական, այլ նաև հակառակորդի մտադրություններից: Առաջինները մեզ հայտնի են, իսկ երկրորդների հարցում մենք կարող ենք սոսկ ենթադրություններ կատարել: Ընդ որում, իբրև հիմնակետ, պետք է ծառայեն այն տվյալները, որոնք թշնամու համար առավել շահավետ են: Թեև նրա կամքը կարելի է ճշտել ժամանակին և վճռականորեն խլելով նախաձեռնությունը, սակայն կոտրել այն կարելի է սոսկ մարտավարության միջոցով՝ ճակատամարտերով:

Ամեն մի խոշոր ճակատամարտի նյութական և բարոյական հետևանքներն այնքան մեծ են, որ լիովին փոխում են իրավիճակը, ուստի և ստեղծում են նոր հիմք՝ հետագա միջոցառումների համար: Ամեն բան կախված է պահի ճիշտ գնահատումից, որի հիման վրա հարկ է տալ համապատասխան կարգադրություններ և եռանդով իրականացնել դրանք: Ճակատամարտի մարտավարական ելքը մի տեսակ միջակա կետ է նոր ռազմավարական որոշումների համար, քանզի հաղթանակը կամ պարտությունը այնքան են վերափոխում իրավիճակը, որ ոչ մի խորաթափանցություն չի կարող կանխատեսել առաջին մարտից հետո կատարվելիք դեպքերը: Հենց այս իմաստով հարկ է հասկանալ Նապոլեոնի հետևյալ արտահայտությունը «Ես գործողությունների ծրագիր երբեք չեմ ունեցել»:

Այսպիսով, հնարավոր չէ թեկուզ մասնակի վստահությամբ կանգ առնել գործողությունների այն ծրագրի վրա, որն ի զորու է թշնամու գլխավոր ուժերի հետ առաջին բախումից ավելի հեռուն գնալ: Միայն այն մարդը, որը բացարձակապես ոչ մի գաղափար չունի ռազմական արվեստի մասին, կարող է մտածել, որ ռազմարշավն ամբողջությամբ ընթանում է ամենայն մանրամասնությամբ նախատեսված ծրագրով և որ վերջինս ճշտորեն կպահպանվի միչև վերջ:

Անշուշտ զորավարը երբեք չի հրաժարվում իր գլխավոր նպատակից, որքան էլ նրանից մասնակի շեղումները անխուսափելի լինեն, բայց նա անկարող է նախապես

ճշգրիտ որոշել այն ուղին, որով մտադիր է հասնել իր նպատակին: Ռազմարշավի ընթացքում նա ստիպված է ընդունել մի շարք որոշումներ, որոնք կանխատեսել հնարավոր չէ: Անհրաժեշտ է բոլոր մասնավոր դեպքերում կանխատեսել իրավիճակը, որ քողարկված է անհայտության շղարշով, ապա ճշգրիտ գնահատել տվյալները, արագ որոշում կայացնել ու եռանդուն և անվարան իրականացնել այն:

Երկու մեծությունների շարքում, որոնցից մեկը՝ մեր կամքը, հայտնի է, իսկ երկրորդը՝ թշնամու կամքը՝ անհայտ, ներմուծվում է և երրորդը՝ գործոններ, որ ոչ մի հաշվարկի չեն ենթարկվում. Եղանակը, հիվանդությունները, երկաթուղային աղետները և այլն, որոնք չեն ստեղծվում մարդու կողմից և չեն ենթարկվում նրան: Եվ այսուհանդերձ, այս պատահականությունները ի վերջո օգուտ կամ վնաս են տալիս թե մեկ և թե մյուս կողմին, ուստի և զորավարը, որ յուրաքանչյուր առանձին դեպքում տալիս է եթե ոչ լավագույն, ապա գոնե նպատակային հրամաններ, դեռևս հնարավորություն ունի հասնելու իր նպատակին:

… Պարզ է, որ այդ բանի համար բավարար չեն սոսկ տեսական գիտելիքները: Պատերազմը հնարավորություն է տալիս զարգացնել միտքը և կոփել կամքը: Այս հարցում նեցուկ կարող է լինել ռազմական կրթությունը՝ ղեկավարվելով փորձով, որ քաղում են կյանքից կամ ռազմական պատմության ուսումնասիրությամբ:

… Անհրաժեշտ է *տարբերակել պատերազմի նպատակը օպերացիայի նպատակից*: Պատերազմի նպատակը հակառակորդի բանակը չէ, այլ նրա երկիրը, նրա մայրաքաղաքը, պետության միջոցների աղբյուրները և քաղաքական հզորությունը: Այն ընդգրկում է այն ամենը, ինչ ցանկալի է ձեռք բերել: Իսկ օպերացիայի նպատակը հակառակորդի բանակն է, քանի որ այն պաշտպանում է պատերազմի նպատակը: Սույն պայմանը իր նշանակությունը կորցնում է, եթե հակառակորդի զորաշարքերը մարտերի հետևանքով խախտված են կամ ընդհանրապես թույլ են, ի վերջո, եթե հակառակորդի բանակը գտնվում է հեռու տարածության վրա կամ այնպիսի տեղանքում, որը խոչնդոտում է նրա հարձակողական գործողությունները: Այդ դեպքում երկրի մի մասը կամ քաղաքը կարող է ստանալ ավելի մեծ նշանակություն, քան բանակը, այսինքն՝ պատերազմի և օպերացիայի նպատակները համընկնում են:

… Ռազմավարական հարձակման հաջողության համար անհրաժեշտ է համապատասխան որոշումները խիստ *գաղտնի պահել* մինչև կատարման պահը: Վերջնագրի ներկայացման օրը հարկ է ոչ միայն զորահավաք հայտարարել, այլ նաև զորաշարժի հրաման արձակել: Այդ օրվանից սկսած ոչ դիվանագիտական բանակցությունները, ոչ քաղաքական նկատառումները չպետք է ընդհատեն ռազմական գործողությունների հետական ընթացքը:

… *Թևային դիրքը* այնպիսի դիրք է, որ տեղակայված է հակառակորդի գծին զուգահեռ. թշնամին անկարող է շրջանցել այն, առանց մերկացնելու իր հաղորդակցության ուղիները և գրոհել՝ առանց վերափոխելու ճակատային գիծը: Վերջապես, այն շեղեում է նախնական նպատակից՝ հաղթական ճակատամարտ և դրանից բխող հետապնդում: Ընդ որում, պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ մենք ևս պետք է հրաժարվենք նահանջի մեր ճանապարհից: Հետևաբար, թևային դիրք կարելի է ընդունել սովորաբար միայն երկրի ներսում, այն պայմանով, որ թիկունքը բարեկամական է և կարող է մեզ ապահովել անհրաժեշտ պարենով: Թշնամու երկրում այն իրականացնելը անհամեմատ դժվար է:

Գլխավոր պայմանը, որին պետք է բավարարի թևային դիրքը, այն է որ նրա ճակատը պետք է լինի թշնամու ճակատային գծին զուգահեռ, իսկ նահանջի ուղին՝ մոտավորապես ուղղահայաց: Նրա ճակատային մասը պետք է հզոր լինի, որպեսզի կարողանա դիմանալ հակառակորդի գերակշիռ ուժերի հարձակմանը: Մյուս կողմից՝ այն չպետք է մեզ խանգարի, եթե մենք անցնենք հարձակման: Տեղանքը հազվադեպ է բավարարում այս երկու պայմաններին միաժամանակ, ուստի անհրաժեշտ է կառուցել տվյալ տեղանքին համապատասխանող ամրություններ, որպեսզի համառ դիմադրություն ապահովող պայմանները միավորենք արագորեն հարձակման անցնելու պայմանների հետ:

Թևային դիրք հարկ է ընդունել այնպես, որ այն վճռորոշ ազդեցություն ունենա դեպքերի ընթացքի վրա: Ի դեպ, թևային դիրքի նշանակությունը ոչ այնքան հակառակորդի առաջխաղացման ուղիները հզոր կրակի տակ պահելն է, որքան այնտեղից հարձակման անցնելու հնարավորությունը: Անշուշտ, ռազմական օպերացիաների վրա թևային դիրքի ազդեցությունը պայմանավորված է հակառակորդից նրա ունեցած հեռավորությամբ: Սոսկ ոչ մեծ հեռավորության վրա, այն, հակառակորդին շեղելով իր ուղուց, հրապուրում է իր կողմը, այնպես, ինչպես մագնիսն է ձգում երկաթը:

… Բանակի ռազմական օպերացիաները մեծապես պայմանավորված են այն բանով, թե ինչպես են գործում *հաղորդակցության ուղիները*, ինչ միջոցներով են տեղ հասցվում պարենն ու ռազմամթերքը, ինչպես են հոգ տանում վիրավորների և հիվանդների մասին: Սոսկ ծառայության այս կարևորագույն ոլորտների շրջահայաց կառավարումը և բոլոր պատասխանատու անձաց լիակատար համագործակցությունը, չնայած պատերազմին ուղեկցող անխուսափելի պատահականություններին, կարող է պահպանել զորքի մարտունակությունը: Այն, ինչ մինչ այժմ գրված է զորքին պարեն մատակարարելու վերաբերյալ, ընդամենը տեսական դրույթների համակարգ է, որը անթիվ-անհամար մասնավոր դեպքերում կիրառելու համար հարկ է օժտված լինել մեծագույն արվեստով:

Ժամանակակից պետություններում առկա բանակների թվաքանակը, վճռական գործողությունների արագ ընթացքը, դրանց հետևանքով առավելագույն չափերի հասած ծախսերը հույժ կարևորել են *թիկունքի ծառայությունների* դերն ու նշանակությունը: Որքան բանակն ավելի է հեռանում իրեն սնուցող աղբյուրներից, որքան ավելի է խորանում թշնամու տարածքում, այնքան ավելի խոցելի են դառնում նրա հաղորդակցության ուղիները: Անգամ վերջիններիս անխափան գործելու դեպքում բանակը երբեմն կարող է սովահարության մատնվել, ինչպես ֆրանսիական բանակը 1812 թվականին, չնայած Կուտուզովի դանդաղկոտ գործողությունների շնորհիվ նրա նահանջի ճանապահը երբեք չփակվեց: Ճակատային գծի առջևում երկաթուղու հետ հույսեր կապելը անիմաստ է, քանի որ նահանջող հակառակորդի համար ամենադյուրին բանը երկաթուղագիծը ոչնչացնելն է: Պետք է բավարարվել նրանով, ինչ յուրաքանչյուր զինվոր ունի իր ուսապարկում, ինչպես նաև այն ամենով, ինչ հնարավոր է բռնագրավել: Առաջապահ զորախումբը գրեթե մշտապես գտնվում է նման իրավիճակում: Ժամանակավորապես որևէ վայրում տեղակայված զորքերը պետք է բավարարվեն իրենց պահեստներով, քանզի ցանկացած երկիր արագորեն կհյուծվի բռնագրավման հետևանքով: Նահանջը ընդհանուր առմամբ հեշտացնում է մատակարարումը՝ մեզ մոտեցնելով մեր երկաթուղուն և պահեստավորման կետերին:

Այս ամենը՝ տեսականորեն, մինչդեռ իրականում պատերազմը չի բաղկանում բանակի սոսկ հարձակման, նահանջի և որևէ վայրում տեղակայման տևական փուլե-

րից: Այս գործողությունները կամ զուգորդված են և կամ արագորեն փոխարինում են միմյանց: Որևէ անսպասելի դեպք, երբեմն սոսկ ինչ-որ տեղեկություն ստիպում են հարձակումը փոխարինել նահանջով և ընդհակառակը: Այստեղ ոչ մի տեսություն օգնել չի կարող. Նման անկանխատեսելի իրավիճակները հաղթահարելու համար անհրաժեշտ է, որ մատակարարումը ղեկավարող պաշտոնյաներն օժտված լինեն վերին աստիճանի հեռատեսությամբ, վճռականությամբ և կամքի ուժով:

Այս կարևոր ոլորտի համար նախապատրաստական վարժանքներ կազմակերպելը թերևս ավելի դժվար է, քան բուն պատերազմական գործողությունների ընթացքում փորձառություն ձեռք բերելը: Անհնար է վարժանքի համար համալրել պահեստարանները և տեղափոխել դրանք: Խաղաղ ժամանակ կազմակերպվող զորավարժությունները չեն կարող ստեղծել այն իրավիճակները, որոնք առաջանում են պատերազմի ընթացքում:

… Զինվորների առողջության պահպանման անհրաժեշտ պայմաններից են լավ սնունդը, կենցաղում և առանձնապես սննդի պատրաստման ժամանակ լիակատար մաքրության առկայությունը, ռազմարշավի ընթացքում տարատեսակ վարակիչ հիվանդությունների դեմ ձեռնարկվող նախազգուշական միջոցառումները: Առողջ բանակ ունենալու, վիրավորների ու հիվանդների նկատմամբ հոգ տանելու խնդիրը ոչ միայն իրավասու ծառայությունների, այլ նաև բարձրագույն հրամանատարության պարտականությունն է:

Մանրամասն տե՛ս Мольтке Г.-К.-Б. Военные поучения: Оперативная подготовка к сражению: Пер. с нем / Фельдмаршал Мольтке. - Москва : Воениздат, 1938 (Ленинград : Тип. им. К. Ворошилова). - 311 с.